ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2023

ՀՏԴ 373:941:(479.25)
ԳՄԴ 74.2+63.3(2h)
Հ 282

Պատասխանատու՝ ՆԱՐԻՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի Հայոց պատմության ամբիոններին, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտին, պատմության ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց՝ ուղեցույցի նախագծի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար, որոնք հաշվի են առնվել ուղեցույցի սույն տարբերակում:

Հ 282 Հայոց պատմություն: Պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույց: Գնահատման և թեստավորման կենտրոն, 2023. 42 էջ:

ԳՄԴ74.2+63.3(2h)

ISBN 978-9939-805-67-2

© Գնահատման և թեստավորման կենտրոն

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.........................................................................................4

Թեստի կառուցվածքը ......................................................................5

Առաջադրանքների կառուցվածքային տեսակները ..............................7

Առաջադրանքների նմուշներ ...........................................................9

Քննական ծրագրում ընդգրկված ուսումնական նյութը...................25

Պատասխանների ձևաթուղթը .........................................................40

Հանձնարարվող գրականություն ....................................................41

# ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված է 2023-2024 ուսումնական տարվա պետական ավարտական և միասնական քննությունների թեստի կառուցվածքը, տրված են առաջադրանքների թեմատիկ, բովանդակային ու կառուցվածքային տեսակները և տիպերը, դրանց համամասնությունը թեստում, առաջադրանքների լուծման եղանակների և պատասխանների ձևաթղթում լրացման կարգի բացատրությունները, առաջադրանքների նմուշներ, քննական ծրագրում ընդգրկված ուսումնական նյութը, պատասխանների ձևաթուղթը և պատասխանի գնահատման չափանիշները, հանձնարարվող գրականությունը:

Հայոց պատմության շտեմարանները, պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը կազմվում են համաձայն ուղեցույցի:

**Քննական թեստերը կազմվում են քննական ծրագրում ընդգրկված՝ ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագրքերի համապատասխան ուսումնական նյութերի հիման վրա ստեղծված առաջադրանքներից: Դրանք կարող են լինել՝ «Հայոց պատմություն. պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան»-ի երեք գրքերից (2021 թ. և 2022 թ. հրատարակություն, «Զանգակ») ընտրված առաջադրանքներ, ինչպես նաև շտեմարանային առաջադրանքների և քննական ուսումնական նյութի հիմքի վրա ստեղծված նոր առաջադրանքներ:**

# ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից և ներառում է 70 առաջադրանք:

Ա մակարդակի առաջադրանքները վերաբերում են պետական ավարտական քննությանը և միասնական քննության ավարտական մասին:

Միասնական քննությունը ներառում է Ա և Բ մակարդակները:

Թեստային առաջադրանքները ունեն հետևյալ 3 կառուցվածքային տեսակները՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և պնդումների փունջ՝ բաղկացած 6 պնդումներից:

Ընտրովի պատասխանով (թեստի հ. հ. 1-34 և 46-57 առաջադրանքներ) և կարճ պատասխանով (հ. հ. 35-44 և 58-69) առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր, պնդումների փնջի ամբողջական ճիշտ պատասխանին՝ 6 միավոր (հ. հ. 45 և 70):

Թեստի ընդհանուր միավորը այդպիսով կազմում է 80:

Ստորև տրված աղյուսակում ներկայացված են առաջադրանքների բովանդակային և կառուցվածքային տիպերը, դրանց տեսակներն ու համամասնությունը:

| Առաջադրանքների բովանդակային տիպերը | | Կառուցվածքային տիպերը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ա մակարդակ | | | Բ մակարդակ | | |
| | | Ընտրովի պատաս-խանով | Կարճ պատաս-խանով | պնդում-ների փունջ | Ընտրովի պատաս-խանով | Կարճ պատաս-խանով | պնդում-ների փունջ |
| 1 | Տարեթվերի իմացություն | 10 (1-8, 28-29) | --- | | --- | --- | |
| 2 | Փաստերի և երևույթների իմացություն | 10 (9-16, 30-31) | --- | | --- | --- | |
| 3 | Աշխատանք սկզբնաղբյուրների հետ | 5 (17-18, 32-34) | --- | | --- | --- | |
| 4 | Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն | 2 (19-20) | 2 (35-36) | | 2 (46-47) | 2 (58-59) | |
| 5 | Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն | 2 (21-22) | 2(37-38) | | 2 (48-49) | 2 (60-61) | |
| 6 | Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն | 2 (23-24) | 2 (41-42) | | 3 (50-52) | 3 (65-67) | |
| 7 | Պատմական իրադար-ձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում | 2 (25-26) | 2 (43-44) | | 2 (53, 57) | 2 (68-69) | |
| 8 | Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում | 1 (27) | 2 (39-40) | 1 (45) | 3 (54-56) | 3 (62-64) | 1 (70) |

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Քննական թեստի առաջադրանքների կ ա տ ա ր մ ա ն հանձնարարությունները ձևակերպվում են հարցերի կամ պահանջների տեսքով:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներում ձևակերպվում է հ ա ր ց ը կ ա մ պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքները երկու տիպի են և ունեն կատարման տարբեր եղանակներ:

Առաջին տիպի կարճ պատասխաններով առաջադրանքներում պահանջից հետո կարող են տրված լինել պատասխանի համարակալված՝ հինգից մինչև ինը տարբերակ (պնդումներ, բացատրություններ, տերմիններ, իրադարձություններ և այլն), որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան(ներ)ը: Ա մակարդակում տրված են հինգ կամ վեց համարակալված տարբերակներ, որոնցից ճիշտ են մեկը կամ երկուսը: Այն առաջադրանքում, որտեղ ճիշտ պատասխանն է համարակալված տարբերակներից միայն մեկը, պետք է նշել միայն դա: Այն դեպքում, երբ ճիշտ պատասխանն է համարակալված տարբերակներից երկուսը, պետք է երկուսն էլ գրանցել: Ոչ ամբողջական կամ սխալ պատասխանների, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում քննություն հանձնողը միավոր չի վաստակում:

Բ մակարդակում առաջին տիպի կարճ պատասխանով առաջադրանքներում ճիշտ են պատասխանի համարակալված յոթից մինչև ինը տարբերակներից երկուսը, երեքը կամ չորսը: Այդ դեպքում, կախված առաջադրանքից, անհրաժեշտ է գտնել և գրանցել պատասխանի երկու, երեք կամ չորս ճիշտ պատասխանները: Ոչ ամբողջական կամ սխալ պատասխանների, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում քննություն հանձնողը միավոր չի վաստակում:

Ա մակարդակում երկրորդ տիպի կարճ պատասխաններով առաջադրանքներում 5 դատարկ վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված փաստերի, անունների, իրադարձությունների կամ տարեթվերի համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն կամ համապատասխանություն: Ճիշտ ամբողջական պատասխանի համար տրվում է 1 միավոր, իսկ մեկ և ավելի սխալ պարունակող պատասխանի, կամ ամբողջական պատասխանի բացակայության դեպքերում միավոր չի տրվում:

Բ մակարդակում երկրորդ տիպի կարճ պատասխաններով

առաջադրանքներում 6 կամ 7 դատարկ վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված փաստերի, անունների, իրադարձությունների կամ տարեթվերի համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն կամ համապատասխանություն: Ճիշտ ամբողջական պատասխանի համար տրվում է 1 միավոր, իսկ մեկ և ավելի սխալ պարունակող պատասխանի, կամ ամբողջական պատասխանի բացակայության դեպքերում միավոր չի տրվում:

Պնդումների փունջ առաջադրանքները թեստերում երկուսն են (մեկական Ա և Բ մակարդակներում): Դրանք ներկայացված են հետևյալ կերպ. տրված են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պետք է տրվի առաջարկվող երեք պատասխաններից՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ», մեկը: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Քննական թեստի առաջադրանքները կատարելուց հետո քննություն հանձնողը իր ընտրած կամ ստացած պատասխանները պետք է գրանցի պատասխանների ձևաթղթում:

**Թեստ - գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

**Գնահատումը կատարվում է հետևյալ կերպ.** բացի պնդումների փնջից՝ բոլոր առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը կամ պատասխանի բացակայությունը՝ 0:

Պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար քննություն հանձնողը վաստակում է մեկական միավոր: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում և միավոր չի պակասում: Սխալ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար քննություն հանձնողը ոչ միայն միավոր չի ստանում, այլև կորցնում է մեկ միավոր՝ տվյալ փնջի համար նախատեսված միավորներից: Այսպես՝ եթե քննություն հանձնողը վեց առաջադրանքներից չորսին տվել է ճիշտ պատասխան, իսկ երկուսին՝ սխալ, ապա նա վաստակում է երկու միավոր:

Եթե վաստակած և կորցրած միավորների քանակը հավասար է, կամ կորցրած միավորների թիվը գերազանցում է վաստակած միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Ստորև ներկայացված են թեստային առաջադրանքների նմուշներ՝ դրանց կատարման և ձևաթղթում լրացման վերաբերյալ բացատրություններով:

### Ա մակարդակ

**1. Տարեթվերի իմացություն**

Այս առաջադրանքները միայն ընտրովի պատասխանով են: Ձևակերպվում է հարցը կամ պահանջը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

**8** **Ե՞րբ է ՀՀ Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակել անկախ պետություն:**

1) 1991 թ. սեպտեմբերի 21
2) 1991 թ. սեպտեմբերի 23
3) 1990 թ. հոկտեմբերի 16
4) 1990 թ. օգոստոսի 23

Այս և ընտրովի պատասխանով մյուս առաջադրանքներին պատասխանելիս՝ քննություն հանձնողը համապատասխան համարի առաջադրանքի սյունակի չորս վանդակներից մեկում պետք է դնի «**X**» նշանը: Օրինակ, եթե քննություն հանձնողը 8-րդ առաջադրանքի համար ընտրել է 3-րդ պատասխանը, ապա դա պետք է գրանցի հետևյալ ձևով՝




Եթե քննություն հանձնողը ընտրովի պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում ***«Սխալ նշված***

***պատասխանները փոխելու տեղը»*** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.




**2. Փաստերի և երևույթների իմացություն**

Այս առաջադրանքները նույնպես միայն ընտրովի պատասխանով են: Ձևակերպվում է հարցը կամ պահանջը և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

**Ո՞րն է հայերեն առաջին տպագիր գիրքը:**

1) «Ուրբաթագիրք»
2) «Տաղարան»
3) «Տոնացույց»
4) «Սաղմոսարան»

**3. Աշխատանք սկզբնաղբյուրների հետ**

Այս առաջադրանքները ևս միայն ընտրովի պատասխանով են: Ներկայացվում է հարցը կամ պահանջը, սկզբնաղբյուրային մեջբերումը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

**Ո՞ր պայմանագրի կնքումից հետո է Ասքանազ Մռավյանը ասել հետևյալ խոսքերը:**

*«Մենք չենք կարող երբևիցէ հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:*

1) Մոսկվայի պայմանագիր
2) Կարսի պայմանագիր
3) Բաթումի պայմանագիր
4) Սևրի պայմանագիր

**4. Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն**

Այս առաջադրանքները ըստ կառուցվածքի երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորսից մինչև վեց տերմինի և հասկացության բացատրություն: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

**Ո՞վ էր Նանեն հայոց դիցարանում:**

1) Սիրո և գեղեցկության դիցուհի
2) Ընտանիքի հովանավոր դիցուհի
3) Մայրության և պտղաբերության դիցուհի
4) Հյուրընկալության դիցուհի

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են տերմինների կամ հասկացությունների բացատրության 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանի երկու տարբերակների համարները:

Օրինակ՝

**Թվարկվածներից որո՞նք են բնորոշում նէպը:**

1) Վարձու աշխատանքի կիրառման արգելք:
2) Պարենմասնատրման փոխարինում պարենհարկով:
3) Խոշոր և միջին բոլոր ձեռնարկությունների սեփականաշնորհում:
4) Ազատ առևտուրի վերականգնում:
5) Դրամական աշխատավարձի կիրառման արգելք:

Այս և կարճ պատասխանով մյուս առաջադրանքներին պատասխանելիս քննությունը հանձնողը պատասխան(ներ)ը պետք է գրանցի նախատեսված հորիզոնական վանդակներում՝ ցանկացած

հաջորդականությամբ:Հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան: Օրինակ, եթե 39-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանն է 3 և 5, ապա այն պետք է գրանցել այս ձևով`




Նույն առաջադրանքի պատասխանը կարելի է գրանցել նաև այս ձևով`




Եթե քննություն հանձնողը կարճ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթերթում ***«Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»*** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում` հետևյալ ձևով.



## 5. Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է չորսից մինչև վեց պնդում կամ փաստարկ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

**Թվարկվածներից ո՞րն է 1828 թ. պարսկահպատակ հայերի վերաբնակեցման հիմնական հետևանքը:**

1) Ախալքալաքի գավառում պարսկահայերը վերաշինեցին և հիմնադրեցին 50 գյուղ:
2) Արևելյան Հայաստանի տարածքի մեծ մասի վրա կրկին սկսվեց ազգահավաք գործընթաց:
3) Համախմբվեցին հայ հասարակության տարբեր խավեր, և ժողովրդական պայքարը նոր թափ ստացավ:
4) Էրզրում ու Կարս քաղաքները զրկվեցին մեծ թվով հայ առևտրականներից ու արհեստավորներից:

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երկու տարբերակների համարը:

Օրինակ՝

**Թվարկվածներից որո՞նք են XVIII դ. 20– ական թթ. Սյունիքի ազատագրական պայքարի պարտության պատճառներ:**

1) Մխիթար սպարապետի՝ թշնամու հետ բանակցելու մտքին հակվելը:
2) Հայկական զորքերի հրամանատարության մեջ տեղի ունեցած պառակտումը:
3) Եսայի Հասան–Ջալալյանի մահը:
4) Սյունեցիների ազատասիրական ոգու անկումը:
5) Հայկական զորքերի միայնակ մնալը թշնամու գերակշիռ

ուժերի դեմ:

### 6. Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում հ ա ր ց ի  կ ա մ պահանջի ձևակերպումից հետո տրվում է 4-6 անունների կամ իրադարձությունների շարք, ինչպես նաև պատասխանի չորս տարբերակ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

**Մեծ Հայքի Արշակունի արքաների անունները դասավորե՛ք ըստ գահակալման հաջորդականության:**

ա. Տրդատ II
բ. Վարազդատ
գ. Վաղարշ I
դ. Վռամշապուհ

1) գ, ա, բ, դ
2) ա, գ, բ, դ
3) դ, բ, ա, գ
4) բ, գ, ա, դ

*Օրինակ՝*

**Գտնել այն իրադարձությունը, որն, ըստ ժամանակագրական հաջորդականության, տեղի է ունեցել վերջինը:**

1) Պողոս Նուբարի նախաձեռնությամբ Փարիզում Հայոց ազգային համագումարը:

2) ՀՅԴ 9–րդ ընդհանուր ժողովը:

3) Արևմտահայերի երկրորդ համագումարը:

4) Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանական առաջին ընտրությունները:

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխանի համարը:

Օրինակ՝

**Գտե՛ք այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1) Բագարան քաղաքում Աշոտ I Բագրատունու թագադրումը:
2) Սևանի հաղթական ճակատամարտը արաբների դեմ:
3) Գագիկ II Բագրատունու մեկնումը Կոստանդնուպոլիս:
4) Անիի հռչակումը հայոց մայրաքաղաք:
5) Տրապիզոնի բանակցությունները Բյուզանդիայի և Վրաստանի միջև:

Այս տիպի առաջադրանքներից մեկը պետք է ներկայացվի հետևյալ կերպ. հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո տրվում է 5 անունների կամ իրադարձությունների շարք: Պատասխանի լրացման համար տրվում են համապատասխան քանակությամբ դատարկ վանդակներ: Վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված անունների կամ իրադարձությունների համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն:

Թեստ-գրքույկում այս տիպի առաջադրանքը ներկայացված է այսպես.

Օրինակ՝

**Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Մծբինի պայմանագրի կնքումը
2) Տրդատ II–ի հաղթական արշավանքը դեպի Տիզբոն
3) Արտաշեսյան հարստության ընդհատումը
4) Խառանի ճակատամարտը
5) Երվանդ III–ի դառնալը Մեծ Հայքի թագավոր

Ձևաթղթում պատասխանը պետք է լրացվի պատասխանի թվերի ճիշտ հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:




Եթե քննություն հանձնողը կարճ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում ***«Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»*** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում հետևյալ ձևով.




7. **Պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում**

Այս տիպի առաջադրանքները ընտրովի և կարճ պատասխանով են: Ընտրովի պատասխանով առաջադրանքում հարցից կամ պահանջից հետո ներկայացվում են պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային օջախների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարքեր (առաջին շարքում ընդգրկվում են չորսից հինգ, իսկ երկրորդում՝ մեկով ավելի բաղադրիչներ), և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարբերակ: Պետք է ընտրել պատասխանի չորս տարբերակներից միայն մեկը:

Օրինակ՝

**Համապատասխանեցրե՛ք հեղինակների և նրանց ստեղծագործությունների անունները.**

1) Ստեփանոս Շահումյան — ա.«Տիեզերական պատմություն»
2)Ստեփանոս Պալասանյան — բ.«Համառօտ պատմութիւն Աղուանից»
3) Աբրահամ Երևանցի — գ.«Պատմութիւն Դավիթ բեկին»
4) Հովսեփ Գաթըրճյան — դ. «Պատմութիւն Հայոց»
ե. «Պատմութիւն պատերազմաց»

1) 1–գ, 2–դ, 3–ե, 4–ա
2) 1–բ, 2–դ, 3–ե, 4–ա
3) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ե
4) 1–բ, 2–ա, 3–գ, 4–ե

Այս տիպի առաջադրանքներից մեկը կարող է ներկայացվել աղյուսակի ձևով: Այդ դեպքում ներկայացվում են պահանջը և վեց սյունակից բաղկացած աղյուսակ, տրվում է դրանց համապատասխանեցմամբ կազմված պատասխանի չորս տարբերակ: Ըստ աղյուսակի առաջին սյունակի հերթականության՝ պետք է կատարել համապատասխանեցում և ընտրել ճիշտ պատասխանը (տարբերակը):

Օրինակ՝

**Կատարել համապատասխանեցում.**

| | Իրադարձությունը | N | Տարեթիվը | N | Գործիչը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վանի ինքնապաշտպանության սկիզբը | 1 | 1895 թ. հոկտեմբեր | 1 | Նիկոլ Դուման |
| 2 | Խանասորի արշավանքը | 2 | 1894 թ.օգոստոսի վերջ | 2 | Մկրտիչ Ավետիսյան |
| 3 | Զեյթունի ապստամբության սկիզբը | 3 | 1896 թ. հունիսի 3 | 3 | Մեծն Մուրադ |
| 4 | Սասունի հերոսամարտի ավարտը | 4 | 1897 թ. հուլիսի 25 | 4 | Աղասի |
| | | 5 | 1890 թ. հուլիս | 5 | Անդրանիկ |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 2 | 3 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 5 | 5 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 4 | 3 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 1 |
| 2 | 1 | 2 |
| 3 | 4 | 3 |
| 4 | 2 | 4 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 2 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 3 | 4 |
| 4 | 1 | 5 |

*Կարճ պատասխանով* առաջադրանքը պետք է ներկայացվի հետևյալ կերպ. ձևակերպումից հետո տրված են պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային օջախների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարք (առաջին շարքում ընդգրկվում են հինգ (համարակալված է տառերով), իսկ երկրորդում վեց (համարակալված է թվերով)՝ բաղադրիչ, և տրված են տառերով համարակալված և զուգահեռաբար դատարկ վանդակներ: Դատարկ վանդակներում պետք է լրացնել առաջին շարքի տառի բաղադրիչին համապատասխանող երկրորդ շարքի բաղադրիչի թիվը:

Թեստային գրքույկում այս տիպի առաջադրանքը ներկայացված է այսպես.

Օրինակ՝

**Հայ հոգևոր գործիչների անունները համապատասխանեցրե՛ք նրանց հետ կապված իրադարձությունների հետ.**

ա) Հովհաննես Բ Գաբեղենացի
բ) Ներսես Գ Տայեցի
գ) Հովսեփ Ա Վայոցձորցի
դ) Ներսես Ա Պարթև
ե) Հովհաննես Ա Մանդակունի

1) 571–572 թթ. ապստամբությունը
2) Վարդանանց պատերազմը
3) Աշտիշատի ժողովը
4) Վահանանց պատերազմը
5) Դվինի 506 թ. եկեղեցական ժողովի գումարումը
6) Զվարթնոցի տաճարի կառուցումը

| | |
|---|---|
| ա | 1 |
| բ | 6 |
| գ | 2 |
| դ | 3 |
| ե | 4 |

Ձևաթղթում պետք է լրացվեն միայն համապատասխան թվերը նույն հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:




Եթե քննություն հանձնողը կարճ պատասխանով որևէ առաջադրանքի պատասխանել է սխալ և ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում ***«Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»*** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում հետևյալ ձևով.




## 8. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում հարցից կամ պահանջից հետո ներկայացվում են 4–6 փաստարկներ կամ պնդումներ: Պատասխանի 4 տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Օրինակ՝

**Գտե՛ք երկու ճիշտ պնդումները.**

ա. Վռամշապուհ արքան առանց Սասանյանների հետ համաձայնեցնելու հայոց կաթողիկոս է նշանակում Սահակ Պարթևին՝ փորձելով միավորել Մեծ Հայքի երկու մասերը:

բ. Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթև կաթողիկոսի հովանավորությամբ Մեսրոպ Մաշտոցն իրագործում է մշակութային դարակազմիկ իրադարձություն՝ ստեղծում է Հայոց այբուբենը:

գ. Վռամշապուհ արքայի հետ խորհրդակցելով՝ Սահակ Պարթևը մեկնում է պարսից արքունիք ու ստանում Վռամ IV–ի համաձայնությունը իր փեսա Համազասպ Մամիկոնյանին Հայոց սպարապետ նշանակելու մասին:

դ. Հայ նախարարների խնդրանքով պարսից թագավոր Հազկերտ I–ը

Վռամշապուհի մահից հետո Հայոց թագավոր է հաստատում Վռամշապուհի որդի Շապուհին:

ե. Վռամշապուհ արքային չի հաջողվում օգտվել ստեղծված բարենպաստ իրավիճակից և միավորել Մեծ Հայքի երկու մասերը:

1) ա, բ 2) բ, գ 3) գ, դ 4) դ, ե

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 5-6 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երկու տարբերակների համարները:

Օրինակ՝

**Գտե՛ք սխալ պնդումները:**

1) Անանիա Շիրակացու կազմած թվաբանության դասագիրքը աշխարհում հնագույնների շարքին է պատկանում:

2) VI դարում իմաստասիրությամբ զբաղվել է նշանավոր ճարտասան և մանկավարժ Պարույր Հայկազնը:

3) Դավիթ Անհաղթն իր «Եղծ աղանդոց» երկում քրիստոնեական հավատքը պաշտպանել է հակադիր ուսմունքներից:

4) «Սահմանք իմաստասիրութեան» երկում մեծ տեղ է հատկացված բնության ճանաչմանը:

5) Դավիթ Անհաղթը կատարել է գիտությունների դասակարգում՝ ըստ բնագիտության, թվաբանության և աստվածաբանության:

*Պնդումների փունջը* ներկայացվում է հետևյալ կերպ. տրված են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պետք է տալ առաջարկվող երեք պատասխաններից՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ» մեկը: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Ձևաթղթում լրացման կարգը. տվյալ պնդման համարի տակ տրված երեք վանդակներից որևէ մեկում պետք է դնել X-նշանը:



Եթե քննություն հանձնողը պնդումների փնջում պատասխանել է սխալ ու ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում ***«Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»*** հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.




**Նմուշ:**

**45. Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

**45.1** 1880–ական թթ. կեսերից պահպանողական և ազատական հոսանքներն իրենց սպառում են:

**45.2** Արևմտյան Հայաստանում ստեղծված առաջին խմբակը հայտնի է «Հայասեր–ազգասեր» անունով:

**45.3** Գրիգոր Արծրունու ազատագրական խմբակը հիմնվել էր Երևանում:

**45.4** «Բարենպատակ ընկերություն» և «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակների նպատակն է եղել ոչ միայն ազատագրել Արևմտահայաստանը, այլև հասնել ազգի երկու հատվածների միավորմանը:

**45.5** Բեռլինի վեհաժողովից հետո հայ հասարակական–քաղաքական գործիչներն իրենց հույսը սկսեցին կապել Գերմանիայի ռազմաքաղաքական զորեղ աջակցությամբ ծավալված հայ զինված պայքարի հետ:

**45.6** «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունն ունեցել է մոտ 30 անդամ, որոնք փորձել են զենք առաքել «թուրքահայ

եղբայրներին»:

# Բ մակարդակ

### 4. Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն

Այս առաջադրանքները ըստ կառուցվածքի երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքները կարող են ներկայացվել երկու ձևով:

Առաջին՝ հ ա ր ց ի կ ա մ պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում են համարակալված 7-10 տերմինների կամ հասկացությունների բացատրություններ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Այս տիպի առաջադրանքների մյուս խումբը կարող է ներկայացվել նաև համապատասխանության ձևով: Տրվում են 4-9 տերմիններ կամ հասկացություններ և դրանց բացատրության վերաբերյալ մեկով ավելի տարբերակներ: Պատասխանի տրված չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 7-9 տարբերակներ, որոնցից պետք է ընտրել ճիշտ պատասխան հանդիսացող երեք կամ չորս տարբերակների համարները:

### 5. Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է համարակալված 7-10 պնդում կամ փաստարկ: Տրվում են պատասխանի 4 տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի համարակալված 7-9 տարբերակներ: Պետք է ընտրել երեք կամ չորս ճիշտ պատասխանի համարները:

### 6. Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում է համարակալված 7-10 անունների կամ իրադարձությունների շարք, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո տրվում է 7-9 անունների կամ իրադարձությունների դասավորություն: Պետք է ընտրել այն երկու տարբերակների համարները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականության ճիշտ դասավորությունը:

Այս տիպի առաջադրանքներից երկուսը թեստում պետք է ներկայացվեն հետևյալ կերպ. առաջադրանքներում պահանջի ձևակերպումից հետո տրվում է 6 կամ 7 անունների կամ իրադարձությունների շարք, այնուհետև տրվում են դատարկ վանդակներ: Վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված անունների կամ իրադարձությունների համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն:

Ձևաթղթում պատասխանը պետք է լրացվի պատասխանի թվերի նույն հերթականությամբ՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:

### 7. Պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում

Այս տիպի ընտրովի պատասխանով առաջադրանքների ձևակերպումից հետո ներկայացվում են պատմական իրադարձությունների, երևույթների, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարքեր (առաջին շարքում կարող են ընդգրկվել վեցից մինչև տասը, իսկ երկրորդում՝ մեկով ավելի բաղադրիչներ), և տրվում է դրանց համապատասխանեցումով կազմված պատասխանի չորս տարբերակ: Պատասխանի չորս տարբերակներից միայն մեկն է ճիշտ:

Այս տիպի առաջադրանքներից մեկը կարող է ներկայացվել աղյուսակի ձևով: Այդ դեպքում ներկայացվում են պահանջը և ութ սյունակից բաղկացած աղյուսակ, և տրվում է համապատասխանեցումով կազմված պատասխանի 4 տարբերակ: Ըստ աղյուսակի առաջին սյունակի հերթականության՝ պետք է կատարել համապատասխանեցում և ընտրել ճիշտ պատասխանը (տարբերակը):

*Կարճ պատասխանով* առաջադրանքները պետք է ներկայացվեն հետևյալ կերպ. ձևակերպումից հետո ներկայացվում են պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային օջախների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների երկու շարքեր․ առաջին շարքում ընդգրկվում են 6 կամ 7 (համարակալված է տառերով), իսկ երկրորդում՝ մեկով ավելի (համարակալված է թվերով) բաղադրիչներ, և տրվում է տառերով համարակալված և զուգահեռաբար դատարկ վանդակներ: Դատարկ վանդակներում պետք է լրացնել առաջին շարքի տառի բաղադրիչին համապատասխանող երկրորդ շարքի բաղադրիչի թիվը:

Ձևաթղթում պետք է լրացվեն միայն ընտրված համապատասխան թվերը՝ յուրաքանչյուր վանդակում մեկ թիվ գրելով:

## 8. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում

Ըստ կառուցվածքի այս առաջադրանքները երկու տիպի են:

*Ընտրովի պատասխանով* առաջադրանքներում հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում են համարակալված 7-10 փաստարկներ կամ պնդումներ, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

*Կարճ պատասխանով* առաջադրանքներում ձևակերպումից հետո ներկայացվում են պատասխանի 7-9 համարակալված տարբերակ-ներ, որոնցից պետք է ընտրել երեք կամ չորս ճիշտ պատասխանի համարները:

*Պնդումների փունջը* ներկայացվում է հետևյալ կերպ. տրվում են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին պետք է տալ առաջարկվող երեք պատասխաններից՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ», մեկը: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Ձևաթղթում լրացման կարգը. տվյալ պնդման համարի տակ տրված վանդակներից որևէ մեկում պետք է դնել «X» նշանը:

## ՔՆՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ (բովանդակային դասիչ)

Քննական ծրագիրը ներառում է «Հայոց պատմություն» առարկայի ավագ դպրոցի 2008 թ. հաստատված ծրագրի հիման վրա 2021-2023 թթ. (Ա. Մելքոնյանի, Ա. Սիմոնյանի և Ա. Նազարյանի խմբագրությամբ) լույս տեսած ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10-12-րդ դասարանների դասագրքերի համապատասխան ուսումնական նյութը:

## ՄԱՍ Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

***Հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմանները:*** Հայոց հայրենիք Հայկական լեռնաշխարհը: Հայաստանի պատմավարչական բաժանումները: Պատմաաշխարհագրական միջավայրի ազդեցությունը Հայոց պատմության վրա:

## ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

